

ԴԱՎ. ՀՈՒՐՅԵ

ԱԶ ԹԱՓԹՓՈՒԿՆԵՐԸ
ՅԵՎ. „ՍՈՑԻԱԼԻԶՄԻ ՄԵԶ
ԿՈՒԼԱԿԻ ՆԵՐՍՃԵԼՈՒ“
ՆՐԱՆՑ ԹԵՇՈՒԱՆ

31 JAN 2018

Պրոլետարմեր բոլոր յերկիրմերի, միացե՛ք

ԴԱՎ. ԼՈՒՐՅԵ

ԱԶ ԹԱՓԹՓՈՒԿՆԵՐԸ
ՅԵՎ «ՍՈՑԻԱԼԻԶՄԻ ՄԵԶ
ԿՈՒԼԱԿԻ ՆԵՐԱՃԵԼՈՒ»
ՆՐԱՆՑ ԲԵՈՐԴԻԱՆ

ДАВ. ЛУРЬЕ

ПРАВЫЕ ОТЩЕПЕНЦЫ И ИХ
ТЕОРИЯ «ВРАСТАНИЯ КУЛАКА
В СОЦИАЛИЗМ»

Армпартиздат, Ереван, 1937

Հնկեր Ստալինը Համհ(բ)Կ ԿԿ-ի վերջին պլենումում առաջ էր.

«Հիմա, յես կարծում եմ, բոլորի համար պարզ է, վորագիշման վնասարարներն ու դիվերսանտները, ինչպիսի դրույթներ ել թեկուղ դիմակավորվեն նրանք, արոցկիստական թե բուխարինյան, վաղուց արդեն դադարել են բանվորական շարժման մեջ քաղաքական հոսանք լինելուց, վոր նրանք դարձել են պրոֆեսիոնալ վնասարարներ, դիվերսանտներ, լրտեսներ, մարդասպաններ, անսկզբունք ու գաղափարազուրկ մի բանդա: Հասկանալի յես, վոր անհրաժեշտ ե անողոքաբար ջախջախել ու արմատախիլ անել այդ պարոններին վորպես բանվոր գասակարդի թշնամիների, վորպես մեր հայրենիքի դավաճանների»:

Այս բոլոր զգվելի, գարշելի բուխարինականները, որոնց կանոնները մերկացված են միևնույն բանդայի մեջ արոցկիստներին, ճետ, ճապոն-ուկրմանական լրտեսների, վնասարարների, դիվերսանտների ու մարդասպանների բանդայի մեջ: Ի փառս իրենց Փաշիստական տերերի հակախորհրդային արոցկիստական-աջ յերկերեսանները դիմում եյին ամենագարշելի, ամենասոր գործողությունների:

Հնկեր Մոլոտովը «Ճապոն-գերման-արոցկիստական գործակալների վնասարարության, դիվերսիայի և լրտեսության դասերը» իր հոգվածում մեջ ե բերում վնասարար Յակովլեվի ցուցմունքները, վորն իր ժամանակին, Մոսկվայի կոմիտեյի ուղղանովյան զեկալարության որով, Խամովնիկիի շրջկոմի քարտուղարն եր: Այս աջ բանդիտը, վերջին ժամանակները Զելյարինսկի եթեկտրո-մետաղալործական կոմբինատի պետը Անելով, ամեն կերպ փորձում եր արտադրությունը կազմալուծել, ամենաար-

Թարգմ. Հ. Գրիգորյան
Խմբ. Ս. Կիրակոսյան
Տեխն. խմբ. Ս. Խաչատրյան
Մրբագրիչ Վ. Զիդեջյան
Կոնսուլ սրբագրիչ Լ. Արուլյան

Քլավիսի լիազոր հ-4896, հրատ. 466,
Պատվ. № 121, տիրաժ 10.000

Հանձնված ե արտադրության 7/VII 1937 թ.

Սարքագրիչ ե տպագրելու 2/VIII 1937 թ.

Գինը 15 կ.

Հայկութերատի տպարան, Երևան,

Ալլահվերդյան № 71



11-286899

ժեքավոր դազգյահները շարքից հանել, բանվորներին դազգեցնել, Նրանց մեջ համաձարակային հիվանդություններ տարածել: Այսպես և աջ հերձվածողների—սոցիալիզմի լկտի թշնամիների—նողկալի կերպարանքը:

* * *

Կուսակցության բոլոր թշնամիներն աշխատում եյին իրենց ուստավբատորական ձգտումները զգեստավորել «թեորիական» դատողություններով, վորոնք ուղղված են Մարքսի—Ենգելսի—Լենինի—Ստալինի միակ հեղափոխական թեորիայի դեմ: Հրաշալի կերպով հասկանալով, վոր լենինիզմն ամենավստահելի գենքն է կուսակցության ձեռքին, սառը դաշաճանները կատաղորեն հարձակվում եյին լենինյան թեորիայի վրա: Այսպես, անարդ արոցկիստներն ու զինովյելականները, ավանտյուրիստական լկտի «ձախ» Փրազով քողարկվելով, առաջ մղեցին մեկ, առանձին վերցրած յերկրում սոցիալիզմ կասուցելու անհնարինության թեորիան: Տրոցկիստական թեորիան նշանակում եր, վոր սլայքարելու կարիք չկա, վոր մենք հաղթել չենք կարող, վոր բանվոր դասակարգն իմֆանակի չե գյուղացիությանը սոցիալիստական ուղիով տանելու և այդ պատճառով մնում ե միայն զենքը վայր զնել կապիտալիզմի անխուսափելի վերականգնման առաջ: Կապիտուլանտական այս թեորիան դաշակարապես զինաթափ եր անում բանվոր դասակարգին և հակախորհրդային տարրերի ձեռքը զենք եր տալիս կուսակցության գծի դեմ պայքարելու համար: Գեկավարվելով բուրժուական այդ թեորիայով, տրոցկիստները շատ շուտով վոխարկվեցին հակահեղափոխական բուրժուական առաջավոր ջոկատի, իսկ ավելի ուշ, մեր յերկրում սոցիալիզմի մեծ հաղթանակների տարիներին, այլասերվեցին ու դարձան ճապոն-գերմանական լրտեսների, դիվերսանների, մնասարանների ու տեղորդիստների բանդիտական ջոկատը:

Կապիտուլանտական, հակահեղափոխական մյուս թեորիան, վորն ուղղված եր դեմի բանվոր դասակարգը նրան զինաթափելու, —այդ դասակարգային պայքարի մարման և սոցիալիզմի մեջ կուլակի խաղաղ ներածման բուխարինյան աջ-ոպորտունիստական «թեորիան» եր:

Բուխարինի անտիբոլշեկային իր պատմությունն ունի: Բուխարինը վաղուց, գեռ մինչչեղափոխական ժամանակաւում,

քարոզում եր մարքսիզմ-լենինիզմի հետ ընդհանուր վոչինչ չունեցող թեորիաներ: Լենինը բարձրցս հարվածել ե նրան այդ բանի համար:

Բուխարինը մինչև Հոկտեմբերյան սոցիալիստական հեղափոխությունը զարդացնում եր պետության «պայթեցման» կիսամարդիստական թեորիան, վորը հանդիպություն ունեցավ հետագայում մեկնաբանել վորակես կռահում սոցիալիստական հեղափոխության ընթացքում բուրժուական պետական մեքնայի վշըրման լենինյան թեորիայի: Բուխարինը զնդակահարված վիճական վայրի Պյատակովի հետ միասին մոլեգին հանդես եր գալիս լենինի դեմ 1918 թվականի հրեսության մասին) և բլոկ եր կազմում Տրոցկու հետ 1921 թվին (գիւկուսիա արհմիությունների մասին): Այլելի ուշ այս հակարուցելիյան «թեորետիկը» դարձավ սոցիալիստական շինարարությանը դույց արվող բուրժուական կուլակային դիմադրության խոսափողը, ստեղծելով իր աջ-ոպորտունիստական թեորիան:

Դեռ 1923 թվին Բուխարինը մի քիչ քողարկված ձեռլ հանդես եր գալիս կապիտուլանտական հայտարարություններով, վորոնք հետադայում նրա կողմից զարդացված են իրեւ սոցիալիզմի մեջ կուլակի ներածման «թեորիա»:

«Ղորքան ավելի արագ ե կարգի ընկնում անտեսական կյանքը, այնքան ավելի արագ ե պրոլետարիատը ձուլում գյուղացիությանը, և գյուղացիական անտեսությունն եվրոպացիոն ճանապարհով (շրջանառության պրոցեսի, պետվարկի, կոոպերացիայի միջոցով և այլն) կամաց-կամաց ներածում ե» հասարակության համասոցիալիստական կազմակերպության մեջ»:

Այսպիսով, Բուխարինը կուլակին միացնում եր դյուլացիության չքամու-միջակ մասսաներին և ուզում եր ջնջել դասակարգային կովկը: Մեր զարդացման բեկման մոմենտին, առաջին հնդամյակի նախորդակին, բուխարինյան այս թեորիան դարձավ կուսակցության գեմ հանդես յեկած աջ ուղղվեցիայի գրոշակը:

Խոսքով ընդունելով սոցիալիստական հասարակության կառուցման հնարավորությունը մեր յերկրում, այդ ուղղվեցիան իրականում դլորիվում եր դեպի այն մեթոդների լիակատար ըլիստումը, վորոնք անհրաժեշտ են սոցիալիզմի կառուցման համար: Այս պատահեց այն պատճառով, վոր Բուխարինը բացեիրաց հրաժարվեց դասակարգային պայքարի մարքսիստական-լենինյան ուսմունքից: Նա հայտարարում եր, վոր բանվոր դասակարգի

գիլկտատուրայի հաստատումից հետո դասակարգային ոլայքարն անխռուսափելիորեն պետք է մարի ընդհուպ մինչեւ իր լիակատար չքացումը։ Այսպիսով, ամբողջ եկոնոմիկան և յերկրի ամբողջ կյանքը սոցիալիզմի ուղղությամբ վերակառուցելու վիթխարի խնդիրն, ըստ Բուխարինի, պետք է կատարվի առանց դասակարգային կովի կամ դոնե այդ կովի մշտական մարման ոլայման-ներում։

Բուխարինը գեռ 1925 թվին զբում եր, վոր յեթե վորեւ տեղ մեր յերկրում նկատվում է դասակարգերի կովի սրում, կապիտալիստական տարրերի գիմադրության սրում, ապա այս բանում մեղալոր են... մեր կազմակերպությունները, կուսակցական ու խորհրդային, վորոնք, իբր թե, անձիւտ քաղաքականություն են վարում։ Իբր թե բավական է միայն բարելավել մեր ապարատը, նրան սովորեցնել կանոնավոր աշխատել, և կուլակների ու նեպմանների դիմադրությունն ինքնըստինքյան կվերանա, նրանք, վորպես հեղաբարո վոչխարիկներ, սիրով կհետևեն խորհրդային իշխանության բոլոր նախադպումներին։

Բոտ Բուխարինի գուրս եր դալիս, թե քանի վոր հրամանատարական բարձունքներն ազդայնացված արդյունաբերության, տրանսպորտի, բանկերի, հողի կերպարանքով խորհրդային պետությանն են պատկանում, ապա մնացած ամեն ինչն ինքնըստինքյան կկատարվի։ Այստեղից բղխում եր աջ-ոպորտունիստական թեորիան և ինքնահոսի պրակտիկան։ Իբր թե չպետք է դիմել վորկե հատուկ ջանքերի, հարկավոր չե մոբիլիզացիայի յենթարկել կուսակցության մարտունակությունը, հարկավոր չե սպայքարել շահագործողական դասակարգերի դեմ, վորովհետև ամեն ինչ արդեն արված է—մնացել ե միայն պառկել կողքի վրա։

Այս գոեհիկ հակախորհրդային թեորիան նշանակում եր կապերի խորս մարքսիզմի-Ենինիզմի հիմունքների հետ, իրավես հրաժարում դասակարգերի վոչխացումից, սոցիալիզմի կառուցումից։ Այս նույնպես ամենալիակատար հրաժարումն եր նաև բանվոր դասակարգի դիկտատուրայից, վորովհետև այդ դիկտատուրայից վոչխնչ չի մնա, յեթե դեն զցենք շահագործողական դասակարգերի դեմ կովելու խնդիրն ու սոցիալիզմի կառուցումը, յեթե դեն զցենք բանվոր դասակարգի դեկավար դերը գյուղացիության հետ կապած նրա դաշինքի մեջ։

Բուխարինի ստոր պնդումներն իրենցից ներկայացնում եյլն

Հենց այն ոպորտունիստական զազրելիությունը, վորը դեռ ենգելուն եր բնութթագրում վորպես հին խողության «խաղաղ-հանգիստ-աղատ-ուրախ» «ներաճումը» «սոցիալիստական հասարակության» մեջ։¹

Պաշտպանելով կուլակային կոոպերատիվ բները, պայքարելով կուլակային տնտեսությունների ծաղկման համար, Բուխարինը կատաղորեն հարձակվում եր կուլեկտիվացման դեմ։ Նա համաձայնում եր կուլեկտիվացումը ճանաչել թերեւ միայն չքավորների համար։ Խոկ միջակների համար, նրա կարծիքով, բավական եր հասարակ կոոպերացումը շրջանառության վորոտում (վարկ, մատակարարում, վաճառահանում)։ Բուխարինն ու նրա անարդ խումբը հրաժարվում եյլն կուլեկտիվացման բարայի վրա ցուղացիական տնտեսության սոցիալիստական վերակառուցման մեծ գործից։ Նրանք անխղճորեն սոցիալիզմի պիտակ չյին փակցնում վոչ միայն մանր, չվերակառուցված գյուղացիական տնտեսության, այլև կաղիտալիստների և կուլակների վրա։

* * *

«Սոցիալիզմի մեջ կուլակի ներաճման» թեորիայի հակահաղափոխական դավաճանական բնույթի ամբողջ խորությունը հասկանալու համար հարկավոր է վերհիշել այն պատմական իրադրությունը, վորի մեջ նա առաջ յեկալ, և դասակարգային այն իրական կոխվը, վորն այն ժամանակ տեղի յեր ունենում մեր յերկրում։

1925 թվականը, յերբ Բուխարինը հանդես յեկավ իր ուստավատորական թեորիայով, վերականդնման ժամանակաշրջանի վերջին տարին եր։

Յերկրի սոցիալիստական ինդուստրացման լոգունգը, վորն առաջ եր քաշել ընկեր Ստալինը կուսակցության XIV համագումարում 1925 թվի վերջին, պատմական նոր շրջան բաց արեց ԽՍՀՄ զարգացման մեջ։ Ինդուստրիալի և ամենից առաջ արտադրամիջոցների ամբողջ արտադրության աճումն ամբողջ ժողովրդական տնտեսության բարձրացման և յերկրի տնտեսական ինքնուրույնության ապահովման կարևորագույն, վճռական պայմանը դարձավ։

¹ K. Marks և F. Энгельс, Письма, № 303.

Կուսակցության ԽՎ համագումարը (1927 թ. դեկտեմբեր) նշելով հետաքա քայլերը յերկրի սոցիալիստական ինդուստրացման ասպարեզում, կուսակցության՝ գյուղում վարած քաղաքականության կարևորագույն խնդիր հայտարարեց աստիճանական անցումը դեպի կոլեկտիվացում։ Այդ ժամանակի մոտերքը կուլակությունը գյուղում փոքր ինչ աճեց և արտադյուղական ապրանքային հացի բավական զգալի մասի (20 տոկոս) տեր եր։ Կուսակցության ԽՎ համագումարը վզրոշում ընդունեց կուլակի վրա ավելի վճռական հարձակում դործելու մասին, հողի վարձակալության և բանվորներ վարձելու իրավունքը կրծատելու մասին։

Հացի և գյուղատնտեսության ապրանքային ուրիշ արտադրանքի պահանջը տարեցարի ալեւանում եր, վորովհետեւ աճում և ամրանում եր ինդուստրիան, ալեւանում եյին բանվոր դասակարգի կադրերը, աճում եյին քաղաքների բնակչության թիվն ու նրա նյութական բարեկեցությունը։

Արդեն կուսակցության ԽՎ համագումարում ընկեր Ստալինը իր զեկուցման մեջ մատնանշեց գյուղատնտեսության աճման տեմպի գանդաղությունը՝ համեմատած մեր սոցիալիստական արդյունաբերության հետ։ Նա մատնանշեց նաև այդ յերեսութիւն պատճառները—գյուղացիական տնտեսության մանր ու մասնատված բնույթը։ Այս պայմաններում գյուղատնտեսությունն իվիճակի չեր ռացիոնալ կերպով կիրառելու աղբոտեխնիկան ու մեքենաները։

Ահա թե ինչպես ձեակերպեց ընկեր Ստալինը 1929 թ. ապրիլին, գյուղատնտեսության կոլեկտիվացման ժամանակաշրջանին սկսվելու նախորյակին, ստեղծված հակասությունները։

«Մենք վերադինում ենք և մասսմբ արգեն վերադինել ենք մեր արդյունաբերությունը, նրան քաշելով տեխնիկական նոր բաղայի վրա, նրան նոր բարելավված մեքենաներ, նոր բարելավված կադրեր մատակարարելով։ Մենք նոր գործարաններ ու ֆաբրիկաներ ենք կառուցում, մենք վերակառուցում ու ընդարձակում ենք հները, մենք զարգացնում ենք մետաղագործությունը, քիմիան, մեքենաշինությունը։ Այս չիմքի վրա աճում են քաղաքներ, բազմանում են նոր արդյունաբերական կետեր, ընդլայնվում են հները։ Այս բազայի վրա աճում ե պարենային մթերքների, արդյունաբե-

րության համար հարկավոր հումքի պահանջը։ Իսկ պյուղատնեսությունը մնում է իր հին գործիքներով, հողի մշակության հին, պատենական մեթոդներով, հին, պրիմիտիվ, այժմ արդեն անպետք կամ համարյա անպետք տեխնիկայով, տնտեսական ու աշխատանքի հին մանր-դյուղացիական անհատական ձևերով...»։

Յեվ այնուհետեւ։

«Այստեղից՝ գյուղատնտեսական մթերքների ապրանքային յելունքի պակասը։ Այստեղից՝ քաղաքի ու գյուղի միջև, արդյունաբերության ու գյուղատնտեսության միջև խզում առաջանալու վտանգը։ Այստեղից՝ գյուղատնտեսությանը թափ հարձակությունը, նրան մեր ինդուստրիայի զարդացման տեմպին հասցնելու անհարժեշտությունը։ Յեվ ահա, վորպեսզի այդ խղման վտանգը չինի, հարկավոր ե սկսել լրջորեն վերազինել գյուղատնտեսությունը նոր տեխնիկայի բարգյի վրա... Հարկավոր ե գյուղացիական մանր անտեսություններն աստիճանաբար փոխագրել խոչը կոլեկտիվ արտադրության բաղայի վրա, վորովհետեւ միայն հանրային տիպի խոչոք արտադրությունն ե ընդունակ ամբողջ թափով ողտագործելու դիտության ու նոր տեխնիկայի տվյալները և յոթմունանոց քայլերով առաջ շարժելու մեր գյուղատնեսության զարգացումը»¹։

Զնայած բուխարինյան «Բեռորիական» պլոտնողին՝ սոցիալիզմի մեջ կուլակի խաղաղ ներածման մասին, իրական կուլակը մեր գյուղում շարունակում եր իր զաղրելի աշխատանքը։ Հաշվի առնելով պետության՝ հացի հարածուն պահանջը՝ կուլակը պահանջեց հացի գների բարձրացում և հայտարարեց պետական մթերքների սաբոտաժ։ Գյուղում կուլակային տարրերն ամեն կերպ ձգտում եյին ներդրավել այդ սաբոտաժի և հացի սպեկուլացիայի մեջ գյուղացիության միջակ մասսաներին։ Կուլակությունը հանդես յեկավ վորպես մի ուժ, վորը ձգտում եր վիժեցնել յերկրի սոցիալիստական ինդուստրացումը։

Մենք զիտենք, թե ի՞նչպես պատասխանեց սրան բանվոր գասակարգի դիկտատուրան, թե ինչպես պատասխանեց մեր կուլակությունն ընկեր Ստալինի ամրակուռ զեկավարությամբ։

1 Ստալին, Լենինիզմի հարցերը, Հայկուսհրատ, 1935 թ., եջ 333—334։

Կուլակության սարստաժը կոտրվեց արտակարգ միջոցների ող-նությամբ, չքավորների ու միջակների կազմակերպման ողնու-թյամբ: Այս հողի վրա ուժեղացավ չքավոր ու միջակ մասսանե-րի համախմբումը կուսակցության և խորհրդային իշխանության շուրջը: Հացամթերումների շուրջը մղված դասակարգային կոփ-վը, կուլակին հասցրած հարվածն արագացրին այն մեծ շարժու-մը, վորը նախապատրաստված եր մեր կուսակցության՝ դյուշում վարած ամբողջ նախընթաց իմաստուն քաղաքականությամբ, — շարժումը հոգուտ համատարած կունկուրացման: Արա հիման վրա 1929 թվի վերջում մեր կուսակցությունը սահմանափակման հին քաղաքականությունից անցավ կուլակության վորպես դասա-կարգի վերացման նոր քաղաքականությանը՝ համատարած կո-ւնկուրացման բաղայի վրա:

* * *

Կոլեկտիվացման հիմունքներով դյուզատնտեսության վերա-կառուցումը դուրս քաշեց կապիտալիզմի ամենախոր արմատնե-րը, վորովհետև խորհրդային պետության զեկավարած սոցիա-մատական կոլտնտեսային դյուզը բացառում և կապիտալիստա-կան տարրերի դոյացման և աճման հնարավորությունը: Կոլեկ-տիվացումն ողնեց արագորեն լուծելու հատիկային պրոբլեմը և ընդարձակելու տեխնիկական կուլտուրաների ցանքային տարա-ծությունները: Այսպիսով, յերկիրն ստացավ ինդուստրացման ա-րագ տեմպերի համար անհրաժեշտ հումք ու պարենային բազա:

Առաջին ու յերկրորդ հնդամյակների ժամանակաշրջանում սոցիալիստական ինդուստրացումն ու կոլեկտիվացումը փոխեցին մեր յերկրի դեմքը, վերածելով նրան հզոր ինդուստրիալ սոցիա-լիստական պետության, վորն ընդունակ է կործանիչ հակահար-ված տալու ամեն մի պետության կողմից յեկող զինված հար-ձակմանը: Վո՞րքան մեծ հերոսություն ցուցաբերեցին կուսակ-ցական և անկուսակցական բոլցեկները և բանվորների ու կո-ւնտեսականների ամենալայն մասսանելը սոցիալիստական ին-դուստրացման գործում: Մարդկանց ինչպիսի նոր սերունդ դաս-տիարակվեց դասակարգային թշնամու և նրա գործակալության դեմ մղած կատաղի կովում առաջին ու յերկրորդ հնդամյակների տարիներում:

Սոցիալիզմի մեջ կուլակի ներաճման՝ Բուխարինի ստեղծած

Հակահեղափոխական «թեորիան» ուժգին քարոզվում եր նրա ա-մենազարդիկի դարուցիկի կողմից՝ Սլեպկովի, Զայցեվի, Այխեն-վալդի, Մարեցկու և ուրիշ գարշելիների կողմից:

Սոցիալիզմի մեջ կուլակի ներաճման «թեորիան» թեավորում եր կուլակությանը: ԶԵ՞ վոր կուլակը հենց այն եր միայն ուղղում, վորպեսզի նրան թույլ տային խաղաղ կերպով իր շահագործո-ղական տնտեսությունը զարգացնելու, չքավորներին ճնշելու, իրենց շոշափուկներով կոռպերացիան, պետական վարկի սիստե-մը և այլն խճճելու, այսինքն սոցիալիստական տնտեսության մեջ ներածելու:

Սոցիալիզմի մեջ կուլակի ներաճման «թեորիան» իդեոլոգի-ական պատյան եր այն աջ պրակտիկայի, վորի դեմ կուսակցու-թյունն անդուռ կոիվ եր մղել:

Բեկման մոմենտին, հերոսական հնդամյակների նախորյա-կին, յերբ կուսակցությունն ինդուստրացման ու կոլեկտիվացման համար մղելիք վճռողական մարտերից առաջ մորիլիզացիայի յեր յենթարկվում, աջ ոպրտունիստները Բուխարինի, Ռիկովի և Տոմսկու գլխավորությամբ առաջ քաշեցին գործողությունների իրենց ծրագիրը, վորը հիմնված եր նրանց թեորիայի վրա: Նրանք բացահայտորեն հանդես յեկան ի պաշտպանություն կու-լակի, սպառնալով, վոր այլապես յերկիրն առանց հայի կմնա: Նրանք պահանջեցին հացի դները բարձրացնել ի հաճույս կուլակ-ների: Այս նպատակներով նրանք առաջարկում եյին կրծատել ներգրանցները սոցիալիստական ինդուստրիայի մեջ:

Ընդումին նրանք հայտարարում եյին, վոր կոլեկտիվացումը հարկավոր չե, վորովհետև նա մեծ միջոցներ ե պահանջում, իսկ կոլտնտեսություններն ամելի հաց չեն տա, քան այն կարե-լի յե կուլակից ստանալ: Նրանք սվիններով ընդունեցին կոնտ-րակտացիան, ՄՏԿ ծավալումը, դյուզացիության հետ հաստա-տելիք արտադրական զողման նոր մեթոդները: Նրանք առա-ջարկում եյին կրծատել սոցիալիստական ինդուստրացումը, հար-մարեցնել նրա թափր մանր դյուզացիական տնտեսության զար-դացման կորիայի տեմպերին և ամբողջովին հանձնվել կուլակի վողորմածությանը:

Սա՝ մեր յերկրում կապիտալիզմի վերականգնման և թշնամի կապիտալիստական շրջապատման առաջ մեր յերկրի գինաթափ-ման պարտված ծրագիրն եր: Այս ծրագրի իրականացումը կը-հասցներ կապիտալիստական տարրերի վոչ միայն արագ աշխու-

Ժայռմանը յերկրի ներսում և սոցիալիստական խնդուստրիալի անկմանը, այլ և զինված ինտերվենցիային՝ դրսից :

Այլքը ունետավլիքատորական ծրագիրը սոցիալիզմի բոլոր նվաճումները մեր յերկրում հանձնում եր իր և ոտարերկրյա կապիտալիստների հեղեղին ու կողոպուտին։ Այդ սոցիալիստական հայրենիքի դավաճանության ծրագիրն եր։ Ահա թե ինչ եր թագնվում դասակարգային պայքարի «մարման» և «սոցիալիզմի մեջ կուլակի ներաճման» հակահեղափոխական շաղակրատանքի հետևում։

Աջ դավաճաների զազրելի թեորիայի և պրակտիկայի մերկացման պատմական ծառայությունը պատկանում է Ենիկը Ստալինին :

Հնկելի Ստալինը ցույց տվեց, ուր սոցիալիզմի մեջ կռւակի ներածման բուխարինյան թեորիան—դա բուրժուական-լիբերալ թեորիա յէ՛ ուղղված գասակարգային պայքարի լենինյան ուսմունքի դեմ:

Ընկեր Ստալինը վեր բարձրացրեց պրոլետարիատի դիկտու-
տուրայի պայմաններում մղվող դասակարգացին կովկի լենինյան
թեորիայի մարտական դրոշակը։ Նա մատնանշեց, վոր դասա-
կարգերի պայքարի մարքսիստական-լենինյան թեորիան «հենց
նրանով ե լավ, իմիջի այլոց, վոր նա հեշտացնում ե բանկոր
դասակարգի մորիկիլացիան պրոլետարիատի դիկտատուրայի
թշնամիների գեմ»¹։

Ստալինյան անվճառ ու սուր վերլուծության սայրի ներքո
հայտաբերվեց բուխարինյան թեորիայի կուլտակային, սոցլավիդ-
մին թշնամի, աշխատավորներին թշնամի եյտությունը:

Ըստ Ստալինը մերկացրեց կուլակին աջակցող այլ թեուխայի սպասարկու դերը :

Նա ասում էր, քննադատելով Բուխարինին .

«Մահացող զասակարգերը դիմադրում են վո՛չ թե այն պատճառով, վոր նրանք ավելի ուժեղ են դարձել, քան մենք, այլ այս պատճառով, վոր սոցիալիզմն ավելի արագ է աճում, քան նրանք, և նրանք ավելի թույլ են դառնում, քան մենք։ Յեվ հենց այն պատճառով, վոր նրանք ավելի թույլ են կառնում, նրանք զգում են իրենց զոյտթյան վեր-

¹ Ստալին, Լենինիզմի հարցերը, Հայկուսնուաթ, 1935 թ., էջ 325:

ջին որերը և հարկադրված են դիմադրելու բոլոր ուժեղութ,

Ահա թե վորն է դասակարգային կոպի սրման ու կապը-
տալիստների դիմադրության մեխանիկան ավշալ սկառմական
մոմենտում»¹:

Այսուհետեւ բնկելը Ստալինը մատնանշում էր.

«Պատմության մեջ դեռևս չեն յեղել այնպիսի դեպքեր, վոր մեռնող դասակարգերը հոժարակամ հեռանան բեմից Պատմության մեջ դեռևս չեն յեղել այնպիսի դեպքեր, վոր մահացող բուրժուազիան իր գոյությունը պաշտպանելու համար չփորձի իր ուժերի բոլոր մնացորդները»²:

Կուսակցության կենտրոնական կոմիտեն իր վորոշումներով
ու նամակներով կուսակցական կազմակերպություններին բաղ-
միցս նախազգուշացրել ե քաղաքական բարեհոգությունից ու
քաղաքենիական բերանքացությունից :

Մի անդամ չե, վոր ընկեր Ստալինն իր յելույթներում սատ-
նանշել ե զգոնությունն ուժեղացնելու անհրաժեշտությունը, ինք-
նահոսսի վրա ամեն մի հույս դնելու արտակարգ վնասը։ Բայց
այս ազդանշաններն ու նախազդուշացումները վատ ելին յուրաց-
վում կուսակցական շատ ընկերների կողմից, և նրանք քաղաքա-
կանապես կարճատեսներ դուրս յեկան ժողովրդի թշնամինների—
տրոցկիստների և աջ հերձվածողների—վնասարար ու լրուեասյին-
դիվերսիոն աշխատանքի առաջ։ Տվյալ յերկույթն ամենից առաջ
նրանով ե բացատրվում, վոր կուսակցական այդ ընկերները
տարվեցին տնտեսական հաջողություններով, մոռացան խոշո-
րագույն քաղաքական հարցերի մասին՝ կապիտալիստական շըր-
ջապատման, տրոցկիզմի և աջերի եվոլուցիայի, դասակարգացյին
կոսմի մասին և այլն։

Ընկեր Ստալինը կե-ի վերջին պլանումը ըստ Հայոց
կան աշխատանքի թերությունների և արոցկիսատկան ու այլ
յերկերեսանիներին լիկվիդացիայի յենթարկելու միջոցառումների
մասին» զեկուցման մեջ բաց արեց բոլոր թշնամի տարրերի տակ-
տիկան և ցույց տվեց կոմունիստների մեջ գոյություն ունեցող

² Տարբերակ, ՀՀ

քաղաքական անհոգության պատճառներն ու արժատները, մերկացրեց ժողովրդի թշնամիների գեմ ուղղված հաջող կովին աբելք հանդիսացող նեխված թերիաները:

«Անհրաժեշտ ե,—ասել ե ընկեր Ստալինը, —ջախջախել և դեն դցել այն նեխված թերիան, թե մեր յուրաքանչյուր առաջնարդացումով դասակարգային կովիլ մեզանում պետք է, իբր թե, ավելի ու ավելի մարդ, թե մեր հաջողություններին զուգընթաց, դասակարգային թշնամին, իբր թե, ավելի ու ավելի ձեռնասուն ե դառնում:

Դա վոչ միայն նեխված թերիա յե, այլ և վտանգավոր թերիա յե, վորովհետեւ այն քննցնում ե մեր մարդկանց, թակարդի մեջ ե դցում նրանց, իսկ դասակարգային թշնամուն հնարավորություն ե տալիս կազդուրդվելու՝ խորհրդային իշխանության գեմ կոփիլ մղելու համար:

Ընդհակառակը, վորքան ավելի առաջ ընթանանք, վորքան ավելի մեծ հաջողություններ ունենանք, այնքան ավելի գաղաղելու յեն ջախջախված շահագործողական դասակարգերի մնացորդները, այնքան ավելի չուտ պետք ե դիմեն նրանք կովիլ ավելի սուր ձեռքի, այնքան ավելի վատություն են անելու նրանք խորհրդային պետությանը, այնքան ավելի կառչելու յեն պայքարի ամենահուսահատ միջոցներին, վորպես դաստապարտվածների վերջին միջոցների:

Պետք ե նկատի ունենալ, վոր ջախջախված դասակարգերի մնացորդները ԽՍՀՄ-ում միայնակ չեն: Նրանք ուղղակի ուժանդակություն ունեն ԽՍՀՄ-ի սահմաններից դուրս դանվող մեր թշնամիներից: Սխալ կլիներ կարծել, թե դասակարգային կովիլ վոլորտը սահմանափակված ե ԽՍՀՄ-ի սահմաններով: Յեթե դասակարգային կովիլ մի ծայրը զործում ե ԽՍՀՄ-ի ըրջանակներում, ապա նրա մյուս ծայրը ձգվում, հասնում ե մեղ ըրջապատող բուրժուական պետությունները: Այդ չեն կարող չդիմության ջախջախված դասակարգերի մնացորդները: Յել չեն կարող չդիմության ջախջախված դասակարգերի մնացորդները: Յել չեն այն պատճենով, վոր նրանք դիմեն այդ, նրանք այնուհետեւ ել չարունակելու յեն իրենց հուսահատ վոտնձությունները:

Այդ ե սովորեցնում մեղ պատմությունը: Այդ ե սովորեցնում մեղ լենինիզմը:

Անհրաժեշտ ե այդ բոլորը հիշել և զգաստ լինել:

* * *

Մեծ են սոցիալիզմի հաղթանակները մեր յերկրում: Զկան արդեն մեր յերկրում կապիտալիստներ, վո՛չ փոքրեր, վո՛չ ել մեծեր, չկա արդեն նաև հող նրանց առաջանալու և աճելու համար: Բանվոր դասակարգը, խորհրդային գյուղացիությունն ու աշխատովոր ինտելիգենցիան համախմբվել ու մերձեցել են միմյանց ինչպես յերբեք առաջներում: Ստալինյան Սահմանադրությունը բաց ե անում բանվոր դասակարգի դիկտատուրայի նոր ժամանակաշրջան, խորհրդային սոցիալիստական գեմոկրատիայի ծաղկման ժամանակաշրջանը: Նոր Սահմանադրությունը վերացրեց իրավական այն բոլոր սահմանափակումները, վորոնք առաջ կիրառվում եյին բնակչության վորոշ կատեգորիաների նկատմամբ: Խորհրդային դեմոկրատիայի այս ծաղկումն տրոցիկիստների, աջ և այլ դավաճանների գեմ կուսակցության մղած անխնակառնություն ե:

Սոցիալիզմին թշնամի տարրերն արդեն սոցիալական հող չունեն մեր յերկրում: Նրանք չեն կարող հենվել ԽՍՀՄ-ի բնակչության խավերից վոչ մեկի վրա: Նրանց բնական բաղան—կուլակությունն ու քաղաքային բուրժուացիան—հողմացըրիս և արված: Բայց այս չի նշանակում, թե թշնամիները դադարել են գոյություն ունենալուց: Ինչպես և կանխատեսում եր ընկեր Ստալինը, մեր հաջողությունները նրանց դիմադրությունը դարձնում են ել ավելի կատաղի, —և չկա այնպիսի մի դավաճանություն, չկա այնպիսի մի դարչելիություն, վորին նրանք ընդունակ չլինելին դիմելու հաղթական սոցիալիզմի գեմ մղած կովում: Յեվ ինքնահոսի ու դասակարգային կովից հրաժարվելու աջ-ոպրտունիստական թերիայի թունավոր սերմը գեռ մեծ վիսա կարող ե հասցնել սոցիալիստական շինարարության պրակտիկային: Այստեղից ե բդիսում մեր կուսակցության անդամներին հեղափոխական զգաստության և քաղաքական աշալլջության վոդով դաստիարակելու անհրաժեշտությունը:

Պատմությունը մեզ ցույց ե տալիս, վոր հակահեղափոխականները յերբեք չեն քաշվել դաշինք կնքելու ոտարերկրյա ինտերվենտների հետ իրենց նպատակներին համելու համար: Բայց դեռ չի յեղել ավելի զաղյելի դավաճանություն, քան այն, վորը կատարեցին տրոցիկիստներն ու կապիտալիզմի աջ ուստամբատորները մեր յերկրում: յերկրի ներսում հող չունենալով՝ նրանք

ՀՀ բաժարվեցին լրենց մտադրությունից և ծառայության մտան
ֆաշիզմի մոտ, դավաճաննելով սոցիալիստական հայրենիքին:

Զի կարելի մոռացության տալ, վոր մենք հարևան ենք Փա-
շիստական յերկիրներին—պատերազմի ոչախներին: Զի կարելի
մոռանալ, վոր Փաշիստական բուրժուազիան վոչ մի միջոց չի
խնայում, վոչ մի արգելքի առաջ կանդ չի առնում, վոր-
պեսզի մեր ժողովրդին գաղութային շահագործման որյեկտի վե-
րածի: Բայց չկա մի այնպիսի ուժ, վորը կարողանար խորտակել
մեր հրաշալի հայրենիքն ու Լենինի-Ստալինի մեծ կուսակցու-
թյունը: Այնքան ավելի խորն է մեր ատելությունը դեպի անարդ
Փաշիստական բանդիտները՝ տրոցկիստներն ու աջ հերձվածող-
ները, այնքան ավելի սուր է հեղափոխական զգոնությունը
բարձրացնելու անհրաժեշտությունը:

„Պրավդա“ Յունիսի 1937 թ.:



5 АВГ 1937
анче 10 коп.

370

II
28689

Д. В. ЛУРЬЕ

ПРАВЫЕ ОТИЩЕПЕНЦЫ

И ИХ ТЕОРИЯ

„ВРАСТАНИЯ КУЛАКА В СОЦИАЛИЗМ“

Армияртиалат, Ереван, 1937